

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարեկանը 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից անդադրատուն մէջ.
Ստորագրողացիք դիմում են ուղղակի
Կոպիւս. Редакція «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խորտակալի բաժնի 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԿԱՌԻՍՏԻՒՆ

Մեր բաժանորդներին, — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Ֆրանսիա: Կ. Պոլսի Միացեալ ընկերու-
թիւն: Նամակ թիւրքիայից: Արտաքին լուրեր:
—ԼԵՌՆԱՅԻՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—
ՖԵՆԵՏՆԵՐ:

ՄԵՐ ԲԱՎԱՆՈՐԿԻՆԵՐԻՆ

Հայերի մէջ զեռ ևս տարածված չէ ըն-
թերցասիրութիւնը, հայը զեռ ևս չէ հաս-
կանում որ առանց մտաւոր զարգացման մի
ազգ գոյութիւն կարող չէ ունենալ:

Այդ է պատճառը, որ մեզանում կար-
ծում են թէ այն մարդը որ յանձն է առել
մի հայոց թերթ հրատարակել, նա ոչ թէ
գրգռած է ընդհանուր, ազգային օգուտի
զազափարից, այլ մի հայոց լրագիր հրա-
տարակելով իր անձնական կապրիզին բա-
ւակնութիւն է տալիս: Հայը մինչև այժմ
չէ հասկանում որ լրագիրը իր յօգուածնե-
րով զարգացնում է ժողովուրդը մտաւորա-
պէս, առաջնորդում է նրան իր թէ մտա-
ւոր և թէ նիւթական կեանքի բոլոր երե-
ւոյթների մէջ:

Հայը զեռ ևս չէ համարում սայրների
լրագրութիւնը մի անհրաժեշտ ազգային
ձեռնարկութիւն, այլ մի պատահական գործ,
որ այս կամ այն մասնաւոր մարդու ֆան-
տազիայից է կախված: Այդ է պատճառը
որ երբ որ հայը տալիս է տարեկան 10
րուբլ լրագրի վարձ, նա այդ չէ համարում
մի անհրաժեշտ ծախս իր համար, այլ կար-
ծում է որ բարբարոս թիւ է և ա-
նում խմբագրին: Լրագիր ստանալը և լը-
րագրին տարեկան բաժանորդագրութիւն
տալը հայը զեռ ևս չաւայութիւն է հա-

ՖԵՆԵՏՆԵՐ

Հնագիտական ժողով:—Պրոֆէսոր Խոջաւանի
վարձուքը:—Միջերկրային և Արևելքի
Ֆոսոգրաֆիաները:—Հայերը հնագիտա-
կան ժողովի ժամանակ և ժողովից յետոյ:
—Ազգութիւն և ազգականութիւն:—Անձնապան
ազգիկ:—Ինչ բան է բարոյական:—Կեանքի պա-
նորամա և իմ գրասանքը ընթերցողի հետ:—Կը-
նակը հասարակ կեանքի:—Ամենքին հետաքրքրող
մի լուր:—Աշխարհի վերջը:—Շամախու առաջ-
նորդ և երկու թիֆլիսցի:

Ինչքան բաներ, ինչքան երևելի բաներ կա-
տարկեցան թիֆլիսում իմ վերջին ֆենետներից
յետոյ:

Բայց, ի հարկէ, վերջին ժամանակ բոլոր կա-
տարկած երևելի գործերի մէջ ամենանշանաւորն
էր թիֆլիսի հնագիտական ժողովը:

Ամբողջ թիֆլիսը մի երկու երեք շաբաթ շա-
բաթանակ ուսումնական էր դարձել, բոլորն էլ հե-
տաքրքրվում էին պատմութեամբ, հնագիտու-
թեամբ, մեր երկրի անցեալով և այլն: Ամենքը
միմեանց մէջ հաշտ էին, բոլորն էլ սիրով յաճա-
խում էին ժողովի նիստերը, լսում էին աւելի
կամ պակաս խնջօք զեկուցումները, աւելի կամ
պակաս ուսումնական մարդկանց ճառերը... Բայց
յանկարծ մի հրեայ մեզ ամենքին քիչ էր մտում
կուսցնում էր միմեանց մէջ, Պրոֆէսոր Խոջա-
ւանի քաղաքային ճաշի ժամանակ իր ստած ճառի
մէջ խոսեց հայերի մասին, առանց մի խօսքով
անդամ յիշելու վրացիներին: Որքան ազդու-

մարում և ոչ թէ անհրաժեշտութիւն: Իսկ
եթէ նա կարգում էր է հայ լրագիրը, աշ-
խատում է ձրիապէս կարգալ, իր ծանօթից
վերջնել թերթը և խմբագրին ոչինչ չը
վճարել:

Բաւական չէ որ հայոց ամենօրեայ թեր-
թը չէ կարող պահպանել ամբողջ հայ հա-
տարակութիւնը, այլ այդ թերթի գէֆիցի-
տը պէտք է ծածկի մի մարդ, ինքն իրմ-
բազիրը, որ համ իր անձնական աշխատանք
պէտք է տայ, համ էլ հազարներ պէտք է
զօհի իր գրպանից, բայց այն հայերից շա-
տերն էլ, որոնք ցանկութիւն են յայտնում
լրագիր ստանալու և ամբողջ տարի ստա-
նում են թերթը, դարձեալ շատ անգամ
չեն վճարում խմբագրին իրանց պարտքը և
ամեն տարի բաժանորդների վրա հասցին
ապառիկներ են մտում:

Ահա ինչ դրութեան մէջ է մեր ժամա-
նակակից հայոց լրագրութեան գործը: Կի-
մում ենք մեր բաժանորդներին և հարց-
նում ենք մինչև ե՞րբ հայ հատարակու-
թիւնը, հայ ազգը անտարբեր կը մնայ
զեպի ժողովրդի լրագրութիւնը, մինչև ե՞րբ
ժողովուրդը լուսաւորելու ծանրութիւնը կը
մնայ անհատների վրա: Մինչև ե՞րբ հայոց
ազգը չի կատարի իր պարտաւորութիւնը,
երբ, վերջապէս, հայերը կը սկսեն հասկա-
նալ որ լրագրութիւնը նոյնքան ան-
հրաժեշտ է մի ազգի համար, որքան ու-
սուցիչն արարն է:

Այդպիսի դրութիւն չէ կարող շարու-
նակվել, մի օր կը զայ որ խմբագիրը կը
զգովի իւրաքանչիւր տարի համ իր գրպա-
նից ծածկելու թերթի հրատարակութեան
գէֆիցիտը, համ էլ նոյն իսկ իր բաժա-
նորդների վրա իւրաքանչիւր տարի ապա-
ռիկներ ունենալու:

Թիւն, յանդգնութիւն և անզգուշութիւն... Վրաս-
տանի մայրաքաղաքում չը յիշել վրացիներին...

Վրացիները վրդովված էին, նրանց ինտելի-
գենցիայից մինը մինչև այն աստիճան քաղաքա-
վարի գանգաւաւ, որ նոյն իսկ ճաշի ժամանակ
չուսցրեց խոջաւանին:

Բայց շուտով պ. Միքելաձէ հայերից և նրանց
պաշտպան Խոջաւանից վրէժը հանեց, ապացու-
ցանելով որ Արղանանը, Ղարսը և Անին վրաց
քաղաքներ են եղել ինչ ժամանակներում ինչ-
քան պ. Միքելաձէն էլ աշխատեց խել պ. Միքել-
աձէի ձեռքից այդ բոլոր տեղերը, բայց նրա
ջանքերը չը պակսեցան կատարեալ աջողու-
թեամբ: Պ. Միքելաձէ պատասխանեց մի լրագրի
մէջ, որ պատրաստ է յետ դարձնել հայերին
Ղարսը և Անին, բայց Արղանանը պահում է իր
համար:

Բազմաբարոյէտ այդ արիւնահեղ պատերազմի
ժամանակ պ. Քիրքեճեանի ֆոտոգրաֆիաները
ապահով տեղումն էին գտնվում, մասամբ աւե-
տարական բանկում, մասամբ էլ «Մշակի» խմբա-
գրատան մէջ, այնպէս որ պ. Միքելաձէ չը կա-
րողացաւ իր ձեռքը զցել Անիի աւերակների
պատկերները և նրանց վրա յորինել վրաց ար-
ձանագրութիւնները:

Մի քանի խօսք էլ կատեմ հայերին: Հայերը,
որոնք հնագիտական ժողովի ժամանակ վրդով-
ված էին վրացիների վարձուքից, վրդովված
էին որ պ. Միքելաձէ սեփականացրել էր իրան
Արղանանը, իսկ պ. Օկրոճէզէզով աշխատեց ար-
պացուցանել որ վրաց տաւերը չէր կարող մի
հայ, Միքելաձէ, հնարել, բայց ընդհակառակն,

Որքան ազնիւ բան: Իմանալ որ խմբա-
գիրը հասցին ծախսեր ունի և մի և նոյն
ժամանակ լրագրին զրկելուց յետոյ, չը
վճարել տարեկան բաժանորդագինը:

Ուրիշ ի՞նչ անուն կարելի է տալ այդ
տեսակ վարմունքին, եթէ ոչ խաբերայու-
թիւն: Խմբագիրը հաշուում է գիցուք որ
1200 բաժանորդ ունի և այդ բաժանորդ-
ների թիւի համեմատ կարգադրում է իր
ծախսերը: Յանկարծ, տարվայ վերջը, տես-
նում է որ բացի սովորական գէֆիցիտից,
մի երկու հարիւր բաժանորդի վրա ապա-
ռիկներ էլ են մտում:

Ամեն այդ տեսակ ազգին, որ լուսաւո-
րութեան գործի մէջն էլ գործ է դնում
խաբերայութիւն, երբ հարցը գալիս է
նիւթականին: Հայը տաս րուբլու համար
էլ պատրաստ է խաբել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հայոց Բարեգործական ընկերութեան» ան-
դամների առաջին ընդհանուր ժողովը կայանում
է նոյեմբեր ամսի 15-ին, կիրակի 12 ժամին,
Արժրուճու թատրոնում, ընկերութեան խորհրդի
անդամներ ընտրելու նպատակով: Անդամ գրվել
ցանկացողները թող բարեհաճեն գիմնը «Մշակ»
և «Մեզու» լրագրների խմբագրատները, նաև
կենտրոնական և կողմնական գրասենյակները:
Ներքին 15-ին նոյն իսկ Արժրուճու թատրոնը: Ան-
դամների տարեկան վճարն է հինգ րուբլի:

Վրաց Թատրոնական խումբը կրկին անցել է
Արժրուճու թատրոնը և կիրակի, նոյեմբերի 8-ին
տունց իր առաջին ներկայացումը այդ թատրո-
նում:

Հայերն են երկի փոխ առել տաւերը վրացիներ-
ից, մասնաւոր որ մինչև այժմս էլ թիֆլիսի
մեր Մետրոպոլիտի մեծ մասը վրացերէն են խո-
սում, հայերը, որոնք աշխատում էին ուսումնա-
կան հիւրերին ամեն բան ինչ որ հայոց է, լաւ
կողմից ցոյց տալ,—ինչ որ հնագիտական ժո-
ղովի նիստերը վերջացան և բոլոր հիւրերը ցըր-
վեցան, նոյն հայերը ամեն բան մտապան,—և
իրանց փառաւոր անցեալը և հարուստ գրական
նութիւնը, և զեանի մէջ թագնված ուսումնա-
կան գանձերը, և խոջաւանին իրանց սուսած խոս-
տումը զօրով, միմեանց մէջ համարալիս լինել
ուսումնասիրել երկիրը, հետազոտել անցեալը,
զարգացնել ժամանակակից գրականութիւնը, նը-
պատեղ ազգի ապագայ մտաւոր կեանքի զար-
գացմանը և այլն, և այլն...

Եւ ահա նոյն հայերը սկսեցին, ինչպէս և հը-
նագիտական ժողովից առաջ, վազել շահի ետե-
ւից, ամեն ներքի և աններքի միջոցներով կո-
պկներ վատասելի, ամեն կեղտոտ միջոցներով
մեծ ուժեղներով հասարակական պաշտօններ
ձեռք զցել, ամբողջ գիւրները կուրծնում թուղթ
խաղալ, միմեանց զէմ ինտրիգաներ վարել, մի-
մեանց փոս փորել, միմեանց զէմ ամենաստոր
մատնութիւններ տնել, նիւթապէս միմեանց կո-
ղտոտել, և այլն, և այլն...

Եւ շատ անգամ եմ առաջարկել ինձ այն հար-
ցը, թէ ինչ է պատճառը, որ հայոց, մասնաւոր
թիֆլիսի հայոց հասարակութեան մէջ ոչինչ բա-
նում չը կայ համարալիսութիւն:—և հասայ այն
կարկանդակները, թէ այդ տխուր երեւոյթի

ԲԱՎՈՒԻՑ ստացանք պ. Գեորգ Լալայանցի
ձեռքով 548 ռուբլ բաժանորդագին շնորհալ
գ'Օրիանի) համար և նոյն լրագրի համար բաժա-
նորդագին, նոյնպէս Բազու քաղաքից, պ. Ա.
Արէլիանցի ձեռքով 16 ռուբլ: Առաջին զուամբի
բաժանորդների ցուցակը կը տպենք առանձին
նամակով, իսկ 16 ռուբլ բաժանորդագին տունը
են հետեւալ անձինք: Հայր Բուզադեան, Պաւլոս
Արեւեան, Գաբրիէլ Տէր-Ստեփանեան, Սարգիս
Շահունեան, Անաստաս Բէկ, Ա. Տէր-Ստեփա-
նեան, Թ. Սաֆարեան, Մ. Տէր-Գրիգորեան, Ա.
Միքայէլեան, Ն. Եարութիւնեան, Բ. Չլիքչիւեան,
Ս. Չարքաշեան, Յովսէփ քահ. Առուշեան: Ճա-
նապարհի ծախսը վճարել է Ա. Արէլիան: Բա-
ժանորդագրութիւնը շարունակվում է: Ուրեմն
Վիլնյայի ֆրանսիական թերթի համար հուսա-
ված բաժանորդագրութեան նախկին 748 ռուբլ
13 կոպ. զուամբի հետ կանի 1307 ռուբլ 13
կոպէկ: Բայց այժմ, երբ այդքան զուամբ է նա-
ւաբվում, մենք իրաւունք ունենք յետ դարձնել
մեզ այն 500 ռուբլ, որ ուղարկեցինք մեզանից
Վիլնյայի թերթի խմբագրութեանը, երբ զեռ
ևս բաժանորդագրութիւնը սկսված էր: Ուրեմն
հանելով 1307 ռ. 13 կոպ. զուամբից 500 ռուբլ,
մնում է մեր խմբագրութեան մէջ դարձեալ 807
րուբլ 13 կոպէկ:

Մեզ գրում են Փարիզից որ Ֆրանսիայի մայ-
րաքաղաքի մէջ հրատարակվող «La Justice»
(Ազգաբարձիւն) լրագիրը, որի խմբագիրն է պ.
Կլէմանսո, յանձն է առնում հայոց դատի պաշտ-
պան հանդիսանալ: Պ. Կլէմանսո արմատական
կուսակցութեան ներկայացուցիչ է և անշուշտ
մտակ ապագայում զառնալու է միմիտար, ու-
րեմն մեծ նշանակութիւն ունի պաշտպանելու հա-
յոց խնդիրը այնպիսի մի թերթի մէջ որ կարող
է ժամանակով գառնալ միմիտարական օրգան
Ֆրանսիայում: Բայց հայոց դատը պաշտպանելու
համար հարկաւոր է նիւթական միջոցներ, բա-
ժանորդագրութիւն: Իսկ թիւրքիայի հայերի վրա
ոչինչ յոյս չէ կարելի դնել: Մենք արդէն բաժա-
նորդագրութիւն բաց արինք Վիլնյայի «Ժուր-
նալ գ'Օրիանի» համար և պատրաստ ենք և «jus-
tice» լրագրի համար էլ նոյնը անել: Բայց եթէ

պատճառն այն է, որ հայը զեռ ևս չըբանում է
միմիտար ընտանիքի, ազգական ութեան
զազափարը, և զեռ չէ ըբանում հասարակու-
թեան, ազգ ութեան զազափարը:

Երևակայեցէք ձեզ որ մի ազատ տեղ է բաց-
վում մի օր և է հիմնարկութեան մէջ, կամ մի
նոր հիմնարկութիւն է հաստատվում, որտեղ ու-
ճիկով պաշտօններ կան: Հայը, ի հարկէ, նախ
և առաջ աշխատում է ինքն ընտրվել, կամ նշա-
նակվել, ոչ թէ այն պատճառով, որ համոզված
է թէ ամեն բանին ընդունակ է, ոչ,—այլ այն
պատճառով որ միջոց ունենայ (թէ կուզ սըր-
տում էլ համոզված լինի որ ինքն անընդունակ
է), իր ապրուստի համար աւելի շատ փող ձեռք
բերել:

Եթէ իրան չէ աջողվում պաշտօնը ձեռք բե-
րել, այն ժամանակ հայը աշխատում է նշանա-
կել տալ այդ պաշտօնի վրա իր մտակ ազգա-
կան ին, կամ այնպիսի մարդուն, որի մասին
յոյս ունի թէ կը պակսվի իր աջակց, կամ իր
քրոջ հետ, ուրեմն նոյնպէս ազգական կը
զառնայ:

Ուրիշ երկրում, որտեղ հասարակական, ազգա-
յին ինքնաձեռնադրութիւն կայ, մարդիկ այդպէս են
մտածում: Հիմնարկութիւնը պէտք է օգուտ բե-
րի ամբողջ ազգին, հասարակութեանը, ուրեմն
պէտք է լաւ գիտայ, իսկ լաւ գիտալու համար
պէտք է զեկակալված լինի ընդունակ և ազնիւ
մարդուց, ուրեմն պէտք է որոնել իմ ազգի, իմ
հասարակութեան մէջ մի ընդունակ, ազնիւ ան-
ձըն, ով և լինի այդ անձը:

Իսկ մեզանում մտածում են այդպէս. «Ինձ